

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ օգոստոսի 14-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Քաջարան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 29 քաղաքացի:

Մասնակիցների մեծ մասը՝ շուրջ 16 քաղաքացի դիմել է աշխատանքի տեղավորման միջնորդության խնդրանքով՝ ընդ որում ԶՊՄԿ-ում: 4 քաղաքացի դիմել է դրամական օգնության խնդրանքով, այդ թվում՝ մեկ քաղաքացի դիմել է ուսման վարձավճարի փոխհատուցման համար: Քաջարանում բնակվող 1 Արցախից տեղահանված քաղաքացի դիմել է նպաստը վերականգնելու համար միջնորդության խնդրանքով: Դպրոցը եղբոր անունով անվանակոչելու խնդրանքով ներկայացել է 1, տան խոհանոցի նորոգման համար նյութական աջակցություն ստանալու խնդրանքով եվս 1, սելավից վթարված կամրջի վերականգնման խնդրանքով էլ 1 քաղաքացի: 2 քաղաքացի հողի սեփականաշնորհման խնդիր ուներ, 1 հոգի դժգոհեց ցածր աշխատավարձից, 1 քաղաքացի էլ թոշակառուների անունից ներկայացել և մեկ ամիս հետո մարզպետի հետ հանդիպման համաձայնություն է ձեռք բերել : 50,55,60 տարիների համատեղ կյանքի համար պետական պարգևատրման առաջարկով էլ հանդես եկավ 1 քաղաքացի:

Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությանը ուսումնասիրվում են քաղաքացիների բարձրացված խնդիրները և կստանան համապատասխան լուծումներ:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ